

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ  
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА  
в АРМЕНИИ

ЦЕНТР ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА  
ОБРАЗОВАНИЯ



MINISTRY OF EDUCATION AND  
SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONAL UNIVERSITY OF  
ARCHITECTURE AND CONSTRUCTION OF  
ARMENIA

CENTER OF EDUCATION QUALITY  
ASSURANCE

20 հունիսի, 2016թ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թ. մայիս ամսվա ընթացքում Ճարտարապետության և շինարարության  
Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ)  
ավարտող ուսանողների հարցման արդյունքների վերաբերյալ

1. Նախաբան

ՃՇՀԱՀ-ի Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Որակի կենտրոն) 2016 թվականի մայիս ամսին անցկացրել է հարցում՝ համալսարանի ավարտող ուսանողների շրջանում:  
Հարցման նպատակն էր.

1. պարզել, թե համալսարանն ավարտող ուսանողները որքանով են բավարարված համալսարանի
  - կրթական գործընթացների կազմակերպմամբ և որակով,
  - ստացած գիտելիքների, հմտությունների, կարողությունների մակարդակով,
  - մատուցած ծառայությունների որակով,
2. բացահայտել, թե որքանով են նրանք կարողանում աշխատանք գտնել՝ առաջին հերթին իրենց մասնագիտությամբ, և ցանկության դեպքում շարունակել կրթությունը:

Հարցումը կազմակերպելու նպատակով Որակի կենտրոնը՝ համալսարանի Ուսումնական մասի և հինգ ֆակուլտետների դեկանատների հետ համատեղ կազմել է բակալավրիատի և մագիստրատուրայի, առկա և հեռակա ուսուցմամբ՝ ավարտող ուսանողների ցանկը: Այնուհետև, Որակի կենտրոնը մշակել և հաստատել է հարցաթերթ, Որակի կենտրոնի պատասխանատուների աջակցությամբ կազմակերպել և ավարտական թեզերի պաշտպանությունից հետո իրականացրել է հարցումները, վերլուծել և ամփոփել են հարցման արդյունքները և կազմվել է սույն հաշվետվությունը: Հարցում իրականացնելու համար մշակված հարցաթերթը պարունակում է 45 հարց, (տես՝ Հավելված 1), որից 9-ը հանդիսանում են ընդհանուր բնույթի, 32-ը՝ կրթական գործընթացները և ծառայությունների որակը գնահատող և 4-ը՝ ապագա աշխատանքային կամ ուսումը շարունակելու հեռանկարները գնահատող:

Հարցումն անց է կացվել համալսարանի 5 ֆակուլտետների 781 ավարտող ուսանողների շրջանում: Նրանցից 662-ը հանդիսանում էին բակալավրիատի, իսկ 119-ը՝ մագիստրատուրայի ուսանող, ընդ որում հարցվածներից 579-ը հանդիսանում են առկա, իսկ 202-ը՝ հեռակա ուսանող: Հարցման ընտրանիում չեն ներառվել հեռակա մագիստրատուրայի ուսանողները, քանի որ նրանք համալսարանն ավարտելու են հաջորդ ուսումնական տարվա կեսին և այդ ժամանակ կարող են գնահատել համալսարանի կրթական գործընթացների և ծառայությունների որակը:

## 2. Հարցվողների ընտրանիի ընդհանուր տվյալները

Հարցմանը մասնակցել են համալսարանի 781 ավարտող ուսանողներից 551-ը կամ՝ ընդհանուրի 71%-ը: Բակալավրիատի 662 ուսանողներից հարցմանը մասնակցել են 445-ը (67%) և մագիստրատուրայի 119 ուսանողներից՝ 107-ը (89%): Հարցման ընտրանին ներառել է առկա ուսուցմամբ 579 ավարտող ուսանողներից 427-ին (74%) և հեռակա ուսուցմամբ 202 ուսանողներից 124-ին (61%): Հարցման ընտրանիի բաշխվածությունն ըստ ֆակուլտետների, մագիստրատուրայի/բակալավրիատի և հեռակա/առկա ուսուցման ձևերի ներկայացված է ստորև, Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Ընտրանիում ներառված ավարտող ուսանողների բաշխումը**

|                                     | Բակալավրիատ |            | Մագիստրատուրա |            | Ընդհանուր  |
|-------------------------------------|-------------|------------|---------------|------------|------------|
|                                     | Առկա        | Հեռակա     | Առկա          | Հեռակա     |            |
| Ճարտարապետության ֆակուլտետ          | 39          | 2          | 36            | 0          | 77         |
| Դիզայնի ֆակուլտետ                   | 111         | 0          | 15            | 0          | 126        |
| Շինարարության ֆակուլտետ             | 57          | 8          | 23            | 0          | 88         |
| Քաղ. տնտեսության և էկոլոգիայի ֆ-տետ | 22          | 33         | 14            | 0          | 69         |
| Կառավարման և տեխնոլոգիայի ֆ-տետ     | 92          | 81         | 18            | 0          | 191        |
| Ընդհանուր                           | 321         | 124        | 106           | 0          |            |
| <b>Ընդհանուր (բակ./մագ.)</b>        |             | <b>445</b> |               | <b>106</b> | <b>551</b> |

## 3. Կրթական գործընթացների գնահատումը

Ստորև՝ Աղյուսակ 2-ում ներկայացված են հարցմանը մասնակցած՝ ՃՇՀԱՀ ավարտող ուսանողների գնահատականները կրթական գործընթացներին վերաբերող մի շարք բնութագրիչներին:

**Աղյուսակ 2. Կրթական գործընթացների գնահատման արդյունքները**

| ՀՀ. |   | Միջին գնահատականը | Համաձայն են | Մասամբ համաձայն են | Համաձայն չեն | Չեն պատասխանել |
|-----|---|-------------------|-------------|--------------------|--------------|----------------|
| 10  | Ես լիովին բավարարված եմ համալսարանում իմ կրթական ծրագրով  | 1.5               | 53%         | 38%                | 7%           | 2%             |
| 11  | Ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից  | 1.5               | 56%         | 34%                | 9%           | 1%             |
| 12  | Իմ կրթական ծրագիրը ինձ հնարավորություն է տվել դառնալ բարձր որակավորում/պահանջարկ ունեցող մասնագետ           | 1.6               | 46%         | 40%                | 10%          | 4%             |
| 13  | Ես ժամանակին լիովին տեղեկացվել էի իմ կրթական ծրագրի նպատակների, պահանջների, վերջնարդյունքների մասին         | 1.5               | 57%         | 31%                | 9%           | 2%             |
| 14  | Դասախոսների գիտելիքները բավարար էին որակյալ դասավանդման համար   | 1.3               | 72%         | 24%                | 3%           | 2%             |
| 15  | Դասախոսների և ուսանողների միջև կար արդյունավետ հաղորդակցություն   | 1.3               | 70%         | 23%                | 5%           | 2%             |
| 16  | Գիտելիքների գնահատումն արդար էր և անկողմնակալ   | 1.4               | 64%         | 26%                | 8%           | 2%             |
| 17  | Ապագա ուսանողներին ես խորհուրդ կտամ ընտրել իմ մասնագիտությունը/ կրթական ծրագիրը իմ բուհում                  | 1.4               | 65%         | 25%                | 8%           | 2%             |
| 18  | Իմ ուսումնառության ընթացքում բուհն արձանագրել է որակական առաջընթաց կրթության և ծառայությունների բնագավառում | 1.4               | 65%         | 25%                | 8%           | 2%             |

Համաձայն Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալների, հարցվողները ընդհանուր առմամբ գոհ են

համալսարանի կրթական գործընթացների որակից: Ուսանողներն առավել գոհ են.

- դասախոսների գիտելիքների մակարդակից (հարց հ. 14, միջին գնահատական՝ 1.3<sup>1</sup>, լիովին գոհ են՝ 72%)
- դասախոսների ու ուսանողների միջև արդյունավետ հաղորդակցությունից (հարց հ. 15, միջին գնահատական՝ 1.3, լիովին գոհ են՝ 70%),
- գիտելիքների արդար և անկողմնակալ գնահատումից (հարց հ. 16, միջին գնահատական՝ 1.4, լիովին գոհ են՝ 64%),
- իրենց ուսումնառության ընթացքում համալսարանի արձանագրած որակական առաջընթացից (հարց հ. 18, միջին գնահատական՝ 1.4, լիովին գոհ են՝ 65%):

Հարցվածների մեծամասնությունը նշել է, որ ապագա ուսանողներին իրենք խորհուրդ կտան բուհում ընտրել իրենց մասնագիտությունը/կրթական ծրագիրը (հարց հ. 17, միջին գնահատական՝ 1.4, լիովին համաձայն անձինք՝ 65%):

Միաժամանակ, հարցվածները միայն մասամբ են համաձայն իրենց կրթական ծրագրին առնչվող հետևյալ պնդումների հետ.

- կրթական ծրագիրը ինձ հնարավորություն է տվել դառնալ բարձր որակավորում ու պահանջարկ ունեցող մասնագետ (միջին գնահատական՝ 1.6),
- ես լիովին բավարարված եմ համալսարանում իմ կրթական ծրագրով (միջին գնահատական՝ 1.5),
- ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից (միջին գնահատական՝ 1.5),
- ես ժամանակին լիովին տեղեկացվել եմ իմ կրթական ծրագրի նպատակների, պահանջների և վերջնարդյունքների մասին (միջին գնահատական՝ 1.5):

Ստորև, Աղյուսակ 3-ում ներկայացված են կրթական գործընթացներին տրված գնահատականներն ըստ ուսանողների կրթական աստիճանի, ուսուցման ձևի և ֆակուլտետների.

**Աղյուսակ 3. Կրթական գործընթացների գնահատումն, ըստ առանձին չափանիշների**

| Հ. | Պնդումներ   | Միջին գնահատականը | Բակալավր | Մագիստրոս | Առկա | Հեռակա | Ճարտարապ. ֆ. | Դիզայնի ֆ. | Շինարարութ. ֆ. | Ք. տնտ. և էկ. ֆ. | Կառավ. և տ. ֆ. |
|----|---|-------------------|----------|-----------|------|--------|--------------|------------|----------------|------------------|----------------|
| 10 | Ես լիովին բավարարված եմ համալսարանում իմ կրթական ծրագրով                                  | 1.5               | 1.5      | 1.6       | 1.5  | 1.5    | 1.4          | 1.2        | 1.4            | 2.0              | 1.7            |
| 11 | Ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից                                | 1.5               | 1.5      | 1.6       | 1.5  | 1.5    | 1.3          | 1.3        | 1.4            | 1.9              | 1.7            |
| 12 | Իմ կրթական ծրագիրը ինձ հնարավորություն է տվել դառնալ բարձր որակավորում ունեցող մ-գետ      | 1.6               | 1.6      | 1.7       | 1.6  | 1.7    | 1.5          | 1.4        | 1.5            | 1.9              | 1.8            |
| 13 | Ես ժամանակին լիովին տեղեկացվել էի իմ կրթական ծրագրի նպատակների և վերջնարդյունքների մասին  | 1.5               | 1.5      | 1.6       | 1.5  | 1.5    | 1.4          | 1.3        | 1.4            | 1.8              | 1.6            |
| 14 | Դասախոսների գիտելիքները բավարար էին որակյալ դասավանդման համար                             | 1.3               | 1.3      | 1.4       | 1.3  | 1.3    | 1.2          | 1.1        | 1.3            | 1.5              | 1.4            |
| 15 | Դասախոսների և ուսանողների միջև կար արդյունավետ հաղորդակցություն                           | 1.3               | 1.3      | 1.4       | 1.3  | 1.4    | 1.3          | 1.2        | 1.3            | 1.5              | 1.4            |
| 16 | Գիտելիքների գնահատումն արդար էր և անկողմնակալ   | 1.4               | 1.4      | 1.4       | 1.4  | 1.4    | 1.3          | 1.2        | 1.3            | 1.9              | 1.5            |
| 17 | Ապագա ուսանողներին ես խորհուրդ կտամ ընտրել իմ մասնագիտությունը/կրթական ծրագիրը իմ բուհում | 1.4               | 1.4      | 1.4       | 1.4  | 1.5    | 1.3          | 1.2        | 1.4            | 1.6              | 1.5            |
| 18 | Իմ ուսումնառության ընթացքում բուհն արձանագրել է որակական առաջընթաց կրթ-ն և ծառ-ների մեջ   | 1.4               | 1.4      | 1.4       | 1.4  | 1.5    | 1.4          | 1.2        | 1.3            | 1.5              | 1.6            |

<sup>1</sup> 1 – լիովին համաձայն եմ, 2 – մասամբ համաձայն եմ, 3- համաձայն չեմ

Համաձայն Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալների, համալսարանի Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի (ՔՏԷՖ) ու Կառավարման և տեխնոլոգիաների ֆակուլտետների (ԿՏՖ) ուսանողներն համեմատաբար ավելի դժգոհ են կրթական գործընթացների որակից, մասնավորապես նրանք.

- մասամբ են բավարարված համալսարանում իրենց կրթական ծրագրերով (հարց հ. 10, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 2.0, ԿՏՖ՝ 1.7, ընդհանուր՝ 1.5),
- մասամբ են գոհ իրենց կրթական ծրագրերի դասընթացների բովանդակությունից (հարց հ. 11, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 1.9, ԿՏՖ՝ 1.7, ընդհանուր՝ 1.5), և
- մասամբ են համաձայն, որ իրենց կրթական ծրագրերն իրենց հնարավորություն են տվել դառնալ բարձր որակավորում և պահանջարկ ունեցող մասնագետ (հարց հ. 12, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 1.9, ԿՏՖ՝ 1.8, ընդհանուր՝ 1.6):

Կրթական ծրագրերին տրված գնահատականները գրեթե նույնն են բակալավրիատի/մագիստրատուրայի և առկա/հեռակա ուսանողների մոտ, չնչին բացասական տարբերությամբ մագիստրատուրայի և հեռակա ուսանողների համար:

Հարցման մասնակիցները ներկայացրել են 270 լրացուցիչ առաջարկ՝ կրթական գործընթացի բարելավման համար: Ուսանողների կողմից առավել հաճախ կրկնվող առաջարկները հետևյալն են.

1. Վերամշակվեն, վերակազմվեն կրթական ծրագրերը և դասընթացները, դառնան ավելի արդյունավետ և մասնագիտացմանն ուղղված, հանվեն մասնագիտության հետ կապ չունեցող առարկաները, ավելի շատ մասնագիտական առարկաներ լինեն – առաջարկների 24%, նշված առաջարկն առաջնային կարևորություն ունի Դիգայնի (ԴՖ) և Շինարարության (ՇՖ) ֆակուլտետների ուսանողներ համար,
2. Տեսական կրթությանը զուգահեռ զարգանա նաև գործնականը, տիրապետենք մասնագիտությանը նաև գործնականորեն, ավելի կարևորվեն և ավելանան գործնական դասընթացները, անցկացվեն նորմալ, ուսումնական և արտադրական պրակտիկաներ – 17%, առաջնային կարևորություն՝ Ճարտարապետության, Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի (ՔՏԷՖ), Կառավարման և տեխնոլոգիաների ֆակուլտետների (ԿՏՖ) ուսանողների համար,
3. Ավելացվեն նոր բաժիններ և մասնագիտական ծրագրեր – 9%, առաջնային կարևորություն՝ ՔՏԷՖ ուսանողների համար,
4. Իրականացվի լաբորատորիաների վերազինում, տեխնիկական համալրում, ստեղծվեն մասնագիտական լսարաններ – 6%,
5. Բարելավվի դասախոսական կազմը, դասախոսները հաճախակի վերապատրաստում անցնեն, երիտասարդ և գիտակ դասախոսների թիվն ավելանա – 5%,
6. Դասերն անցկացվեն համակարգչով, online և այլ ժամանակակից մեթոդներով, նաև Moodle-ով – 5%:

Ուսանողների կողմից ներկայացված՝ կրթական գործընթացների բարելավմանն ուղղված առաջարկների ցանկը՝ ընդհանուր և ըստ ֆակուլտետների, ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 2-ում:

Ավարտող ուսանողները գնահատել են նաև, թե որքանով է համալսարանում ստացած կրթությունը նպաստել իրենց մասնագիտական կարողությունների և ունակությունների զարգացմանը: Ստորև՝ Աղյուսակ 4-ում ներկայացված են հարցվածների ընդհանուր գնահատականները ստացած կարողությունների և ունակությունների վերաբերյալ.

**Աղյուսակ 4. Ստացած կարողությունների և հմտությունների գնահատման արդյունքները**

| ՀՀ. | Կարողություններ և հմտություններ        | Միջին գնահատականը | Մեծապես նպաստել է | Մասամբ նպաստել է | Չի նպաստել | Չեն նպաստում |
|-----|--|-------------------|-------------------|------------------|------------|--------------|
| 20  | Նախագծում                              | 1.4               | 60%               | 31%              | 5%         | 4%           |
| 21  | Տվյալների հավաքագրում և վերլուծություն | 1.5               | 58%               | 34%              | 5%         | 3%           |
| 22  | Համակարգչային ծրագրերի օգտագործում     | 1.6               | 46%               | 40%              | 11%        | 3%           |

|    |   |     |     |     |     |    |
|----|---|-----|-----|-----|-----|----|
| 23 | Նախագծի կառավարում (մենեջմենթ)          | 1.7 | 45% | 34% | 16% | 5% |
| 24 | Առաջնորդություն                         | 1.6 | 46% | 39% | 9%  | 6% |
| 25 | Թիմային աշխատանք և կոնֆլիկտների լուծում | 1.6 | 53% | 30% | 13% | 4% |
| 26 | Հաղորդակցություն և հրապարակային ելույթ  | 1.6 | 49% | 33% | 13% | 5% |
| 27 | Գրավոր շարադրանք                        | 1.6 | 48% | 33% | 14% | 5% |
| 28 | Օտար լեզվով հաղորդակցություն            | 2.0 | 30% | 40% | 27% | 4% |

Համաձայն Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալների հարցվածները գտնում են, որ համալսարանում իրենց կրթությունը հիմնականում նպաստել է հետևյալ կարողությունների և հմտությունների զարգացմանը.

- նախագծում (հարց հ. 20, միջին գնահատական՝ 1.4, լիովին գոհ են՝ 60%),
- տվյալների հավաքագրում և վերլուծություն (հարց հ. 21, միջին գնահատական՝ 1.5, լիովին գոհ են՝ 58%):

Հարցվածները միայն մասամբ են համաձայն, որ համալսարանական կրթությունը նպաստել է իրենց հետևյալ կարողությունների զարգացմանը.

- օտար լեզվով հաղորդակցություն (հարց հ. 28, միջին գնահատական՝ 2.0, լիովին գոհ են՝ 30%, դժգոհ են՝ 27%),
- նախագծի կառավարում և մենեջմենթ (հարց հ. 23, միջին գնահատական՝ 1.6, լիովին գոհ են՝ 45%, դժգոհ են՝ 16%):

Աղյուսակ 5-ում ներկայացված են ստացած կարողությունների և հմտությունների վերաբերյալ տրված գնահատականներն ըստ ուսանողների կրթական աստիճանի, ուսուցման ձևի և ֆակուլտետների.

**Աղյուսակ 5. Ստացած կարողությունների և հմտությունների գնահատումն, ըստ չափանիշների**

| ՀՀ. | Կարողություններ և հմտություններ         | Միջին գնահատականը | Բակալավր | Մագիստրոս | Առկա | Հեռակա | ՃՖ  | ԴՖ  | ՇՖ  | ՔՏԷՖ | ԿՏՖ |
|-----|---|-------------------|----------|-----------|------|--------|-----|-----|-----|------|-----|
|     |   |                   |          |           |      |        |     |     |     |      |     |
| 20  | Նախագծում                               | 1.4               | 1.4      | 1.5       | 1.4  | 1.6    | 1.0 | 1.0 | 1.7 | 2.0  | 1.5 |
| 21  | Տվյալների հավաքագրում և վերլուծություն  | 1.5               | 1.4      | 1.6       | 1.4  | 1.8    | 1.0 | 1.0 | 1.7 | 2.0  | 1.6 |
| 22  | Համակարգչային ծրագրերի օգտագործում      | 1.6               | 1.6      | 2.0       | 1.5  | 2.2    | 1.0 | 1.0 | 1.7 | 2.3  | 2.1 |
| 23  | Նախագծի կառավարում (մենեջմենթ)          | 1.7               | 1.7      | 1.9       | 1.6  | 2.1    | 1.0 | 1.0 | 1.7 | 2.8  | 2.1 |
| 24  | Առաջնորդություն                         | 1.6               | 1.6      | 1.8       | 1.5  | 2.1    | 1.0 | 1.0 | 1.7 | 2.4  | 2.0 |
| 25  | Թիմային աշխատանք և կոնֆլիկտների լուծում | 1.6               | 1.6      | 1.5       | 1.5  | 2.0    | 1.0 | 1.0 | 1.7 | 2.5  | 1.8 |
| 26  | Հաղորդակցություն և հրապարակային ելույթ  | 1.6               | 1.6      | 1.7       | 1.5  | 2.2    | 1.0 | 1.0 | 1.7 | 2.6  | 2.0 |
| 27  | Գրավոր շարադրանք                        | 1.6               | 1.6      | 1.7       | 1.5  | 2.1    | 1.0 | 1.0 | 1.7 | 2.6  | 2.0 |
| 28  | Օտար լեզվով հաղորդակցություն            | 2.0               | 1.9      | 2.3       | 1.9  | 2.2    | 1.0 | 1.3 | 2.4 | 3.0  | 2.2 |

Ըստ Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալների, համալսարանի Ճարտարապետության (ՃՖ) և Դիզայնի (ԴՖ) ֆակուլտետների ուսանողները գոհ են իրենց ձեռք բերած կարողությունների որակից, իսկ Շինարարության (ՇՖ), Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի (ՔՏԷՖ) և Կառավարման և տեխնոլոգիաների (ԿՏՖ) ֆակուլտետների ուսանողները՝ դժգոհ: Մասնավորապես, նշված ֆակուլտետների ուսանողները բավարարված չեն հետևյալ կարողությունների մատուցման որակից.

- օտար լեզվով հաղորդակցություն (հարց հ. 28, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 3.0, ՇՖ՝ 2.4, ԿՏՖ՝ 2.2),
- նախագծի կառավարում և մենեջմենթ (հարց հ. 23, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 2.8, ՇՖ՝ 1.7, ԿՏՖ՝ 2.1),
- հաղորդակցություն և հրապարակային ելույթ (հարց հ. 26, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 2.6, ՇՖ՝ 1.7, ԿՏՖ՝ 2.0),
- գրավոր շարադրանք (հարց հ. 27, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 2.6, ՇՖ՝ 1.7, ԿՏՖ՝ 2.0),

- թիմային աշխատանք և կոնֆլիկտների լուծում (հարց հ. 25, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 2.5, ՇՖ՝ 1.7, ԿՏՖ՝ 1.8),
- առաջնորդություն (հարց հ. 24, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 2.4, ՇՖ՝ 1.7, ԿՏՖ՝ 2.0) և
- համակարգչային ծրագրերի օգտագործում (հարց հ. 22, միջին գնահատական՝ ՔՏԷՖ՝ 2.3, ՇՖ՝ 1.7, ԿՏՖ՝ 2.1):

Նաև, մագիստրատուրայի և հեռակա ուսանողներն համեմատաբար առավել դժգոհ են իրենց ստացած կարողությունների որակից:

#### 4. Բուհական ծառայությունների գնահատումը

Հարցման ընտրանին լրացուցիչ գնահատել է համալսարանի կողմից մատուցած ծառայությունների որակը: Ստորև, Աղյուսակ 6-ում ներկայացված են մատուցված ծառայություններին հարցվածների կողմից տրված ընդհանուր գնահատականները:

**Աղյուսակ 6. Բուհական ծառայությունների գնահատման արդյունքները**

| ՀՀ. | Բուհական ծառայություններ                                  | Միջին գնահատականը | Բավարարված են | Մասամբ բավարարված են | Բավարարված չեն | Չեն պատասխանել |
|-----|---|-------------------|---------------|----------------------|----------------|----------------|
| 29  | Լսարանային պայմաններ և սարքավորումներ                     | 1.5               | 56%           | 33%                  | 8%             | 3%             |
| 30  | Համակարգչային լաբորատորիաներ, ինտերնետ, էլ. փոստ          | 1.6               | 50%           | 34%                  | 13%            | 4%             |
| 31  | Կարիերայի կենտրոնի աջակցություն՝ աշխատանք գտնելու գործում | 1.9               | 33%           | 32%                  | 28%            | 6%             |
| 32  | Ֆինանսական աջակցություն, ներառյալ՝ կրթաթոշակներ, զեղչեր   | 1.7               | 46%           | 29%                  | 19%            | 6%             |
| 33  | Գրադարան  | 1.5               | 56%           | 29%                  | 9%             | 6%             |
| 34  | Հանրակացարան  | 2.1               | 27%           | 21%                  | 38%            | 14%            |
| 35  | Բուֆետ  | 1.7               | 45%           | 28%                  | 21%            | 6%             |
| 36  | Տրանսպորտ   | 2.0               | 32%           | 23%                  | 34%            | 11%            |
| 37  | Մեքենայի կայանատեղի                                       | 1.9               | 36%           | 28%                  | 28%            | 8%             |
| 38  | Առողջապահական ծառայություններ                             | 1.7               | 44%           | 30%                  | 17%            | 9%             |
| 39  | Մշակութային և այլ միջոցառումներ                           | 1.7               | 42%           | 36%                  | 15%            | 7%             |
| 40  | Ուսանողական մարմին, խորհուրդ, թերթ,                       | 1.8               | 39%           | 34%                  | 20%            | 7%             |

Համաձայն Աղյուսակ 6-ում ներկայացված տվյալների, հարցման մասնակիցները մասամբ են գոհ համալսարանի կողմից մատուցած հետևյալ ծառայությունների որակից.

- Լսարանային պայմաններ և սարքավորումներ (հարց հ. 29, միջին գնահատական՝ 1.5, լիովին գոհ են՝ 56%),
- գրադարան (հարց հ. 29, միջին գնահատական՝ 1.5, լիովին գոհ են՝ 56%),
- համակարգչային լաբորատորիաներ (հարց հ. 30, միջին գնահատական՝ 1.6, լիովին գոհ են՝ 50%): Միաժամանակ, հարցվածներն առավել դժգոհ են.
- հանրակացարանային պայմաններից (հարց հ. 34, միջին գնահատական՝ 2.1, դժգոհ են՝ 38%),
- տրանսպորտից (հարց հ. 36, միջին գնահատական՝ 2.0, դժգոհ են՝ 34%),
- մեքենայի կայանատեղիից (հարց հ. 37, միջին գնահատական՝ 1.9, դժգոհ են՝ 28%),
- Կարիերայի կենտրոնի աջակցությունից (հարց հ. 31, միջին գնահատական՝ 1.9, դժգոհ են՝ 28%):

Աղյուսակ 7-ում, ներկայացված են համալսարանի նշված ծառայություններին տրված գնահատականներն ըստ առանձին չափանիշների՝ բակալավր/մագիստրոս, առկա/հեռակա ուսուցում, հինգ ֆակուլտետներ.

**Աղյուսակ 7. Բուհական ծառայությունների գնահատումն, ըստ չափանիշների**

| ՀՀ. | Բուհական ծառայություններ                       | Միջին գնահատականը | Բակալավր | Մագիստրոս | Առկա | Հեռակա | ՃՖ. | ԴՖ. | ՇՖ  | ՔՏԷՖ. | ԿՏՖ |
|-----|--|-------------------|----------|-----------|------|--------|-----|-----|-----|-------|-----|
| 29  | Լսարանային պայմաններ և սարքավորումներ          | 1.5               | 1.5      | 1.6       | 1.5  | 1.5    | 1.4 | 1.3 | 1.5 | 1.7   | 1.7 |
| 30  | Համակարգչային լաբորատորիաներ, ինտերնետ         | 1.6               | 1.6      | 1.8       | 1.6  | 1.6    | 1.5 | 1.3 | 1.6 | 2.0   | 1.8 |
| 31  | Կարիերայի կենտրոնի աջակցություն                | 1.9               | 1.9      | 2.2       | 2.0  | 1.9    | 1.7 | 1.8 | 1.8 | 2.3   | 2.1 |
| 32  | Ֆինանսական աջակցություն, ներ-լ կրթ-ներ, գեղչեր | 1.7               | 1.7      | 1.8       | 1.7  | 1.6    | 1.6 | 1.6 | 1.5 | 2.0   | 1.8 |
| 33  | Գրադարան                                       | 1.5               | 1.5      | 1.6       | 1.5  | 1.4    | 1.4 | 1.4 | 1.4 | 1.7   | 1.6 |
| 34  | Հանրակացարան                                   | 2.1               | 2.1      | 2.3       | 2.1  | 2.0    | 2.1 | 1.9 | 1.8 | 2.4   | 2.3 |
| 35  | Բուժետ, սննդի տրամադրում                       | 1.7               | 1.7      | 1.9       | 1.8  | 1.6    | 1.7 | 1.6 | 1.4 | 2.0   | 1.9 |
| 36  | Տրանսպորտ                                      | 2.0               | 2.0      | 2.3       | 2.1  | 1.9    | 1.9 | 1.8 | 1.8 | 2.2   | 2.2 |
| 37  | Մեքենայի կայանատեղի                            | 1.9               | 1.9      | 2.1       | 1.9  | 1.8    | 1.8 | 1.8 | 1.6 | 2.1   | 2.0 |
| 38  | Առողջապահական ծառայություններ                  | 1.7               | 1.7      | 1.8       | 1.7  | 1.6    | 1.7 | 1.6 | 1.6 | 1.7   | 1.8 |
| 39  | Մշակութային և այլ միջոցառումներ                | 1.7               | 1.7      | 1.8       | 1.7  | 1.6    | 1.8 | 1.6 | 1.5 | 1.8   | 1.8 |
| 40  | Ուսանողական մարմին, խորհուրդ, թերթ,            | 1.8               | 1.8      | 1.9       | 1.8  | 1.7    | 1.7 | 1.7 | 1.7 | 2.1   | 1.9 |

Ստացված ծառայությունների որակից համեմատաբար առավել դժգոհ են մագիստրատուրայի, քան բակալավրիատի ուսանողները, ինչպես նաև առկա համակարգում սովորող ուսանողները: Ըստ ֆակուլտետների դիտարկելիս երևում է, որ ստացված ծառայությունների որակից առավելապես դժգոհում են ՔՏԷՖ և ԿՏՖ ուսանողները:

**5. Աշխատանքային և ուսումը շարունակելու հնարավորությունները**

Համաձայն ստորև՝ Աղյուսակ 8-ում ներկայացված տվյալների, հարցման մասնակիցների ավելի քան 50%-ը՝ համալսարանն ավարտելու պահին ունի աշխատանք (հիմնական աշխատանք՝ 40%, գործարքային հիմունքներով աշխատանք՝ 14%).

**Աղյուսակ 8. Հարց. Դուք աշխատու մ եք և ի՞նչ կարգավիճակով**

| Հարցվածներ          | Հիմնական աշխատանք՝ րիվ կամ կես դրամք | Գործարքային հիմունքներով աշխատանք | Չեն աշխատում | Չեն պատասխանել | Ընդհանուր   |
|---------------------|--------------------------------------|-----------------------------------|--------------|----------------|-------------|
| <b>Ընդհանուր</b>    | <b>40%</b>                           | <b>14%</b>                        | <b>42%</b>   | <b>4%</b>      | <b>100%</b> |
| Բակալավր            | 26%                                  | 18%                               | 52%          | 5%             | 100%        |
| Մագիստրոս           | 99%                                  | 1%                                | 0%           | 0%             | 100%        |
| Առկա                | 50%                                  | 10%                               | 35%          | 5%             | 100%        |
| Հեռակա              | 6%                                   | 28%                               | 65%          | 0%             | 100%        |
| Ճարտարապետության ֆ. | 100%                                 | 0%                                | 0%           | 0%             | 100%        |
| Դիզայնի ֆ.          | 20%                                  | 35%                               | 45%          | 0%             | 100%        |
| Շինարարության ֆ.    | 26%                                  | 0%                                | 74%          | 0%             | 100%        |
| Քաղ. տնտ. և էկ. ֆ.  | 100%                                 | 0%                                | 0%           | 0%             | 100%        |
| Կառավարման և տ. ֆ.  | 14%                                  | 18%                               | 58%          | 10%            | 100%        |

Հիմնական աշխատանք ունեցող անձանց հարաբերակցությունն առավել բարձր է

մագիստրատուրայի (99%) և առկա համակարգի (50%), նաև ՃՖ և ՔՏԷՖ ուսանողների մոտ: Չաշխատողների հարաբերակցությունն առավել բարձր է ՇՖ (74%), ԿՏՖ (58%) և ԴՖ (45%) ուսանողների մոտ:

Ստորև, Աղյուսակ 9-ում, հարցման մասնակիցները նշել են, թե ուսումն ավարտելուց հետո իրենք ինչ պլաններ ունեն աշխատելու կամ կրթությունը շարունակելու առումով:

**Աղյուսակ 9. Ավարտելուց հետո ի՞նչ պլաններ ունեք կրթության կամ աշխատանքի առումով**

| Հարցվածներ          | Շարունակելու են կրթությունս իմ բուհում, իմ մասնագիտությամբ | Շարունակելու են կրթությունս այլ բուհում կամ այլ մասնագիտությամբ | Փնտրում են նոր աշխատանք՝ միայն իմ մասնագիտությամբ | Փնտրում են նոր աշխատանք՝ ոչ միայն իմ մասնագիտությամբ | Աշխատանք չեն փնտրում | Չեն պատահականել | Ընդհանուր   |
|---------------------|--|---|---|--|----------------------|-----------------|-------------|
| <b>Ընդհանուր</b>    | <b>27%</b>   | <b>10%</b>  | <b>27%</b>  | <b>16%</b>   | <b>12%</b>           | <b>7%</b>       | <b>100%</b> |
| Բակալավր            | 22%  | 13%   | 24%   | 18%  | 15%                  | 9%              | 100%        |
| Մագիստրոս           | 49%  | 0%  | 40%   | 11%  | 0%                   | 0%              | 100%        |
| Առկա                | 35%  | 13%   | 23%   | 14%  | 9%                   | 5%              | 100%        |
| Հեռակա              | 0%   | 0%  | 41%   | 24%  | 23%                  | 12%             | 100%        |
| Ճարտարապետության ֆ. | 100%   | 0%  | 0%  | 0%   | 0%                   | 0%              | 100%        |
| Դիզայնի ֆ.          | 58%  | 42%   | 0%  | 0%   | 0%                   | 0%              | 100%        |
| Շինարարության ֆ.    | 0%   | 3%  | 97%   | 0%   | 0%                   | 0%              | 100%        |
| Քաղ. տնտ. և էկ. ֆ.  | 0%   | 0%  | 20%   | 80%  | 0%                   | 0%              | 100%        |
| Կառավարման և տ. ֆ.  | 0%   | 0%  | 27%   | 18%  | 35%                  | 20%             | 100%        |

Համաձայն Աղյուսակ 9-ում ներկայացված տվյալների, հարցվածների 37%-ը պլանավորում է շարունակել կրթությունը՝ 27%-ը՝ ՃՇՀԱՀ-ում, իրենց մասնագիտությամբ, իսկ 10%-ը՝ այլ բուհում կամ այլ մասնագիտությամբ: Ուսումը շարունակելու ցանկություն ունեցող անձանց թիվն առավել բարձր է մագիստրատուրայի, առկա, նաև ՃՖ ու ԴՖ ուսանողների մոտ: Ուսումը շարունակելու ցանկություն չունեն հեռակա, ինչպես նաև ՇՖ, ՔՏԷՖ, ԿՏՖ ուսանողները:

Հարցվածների 47%-ը նշել են հետևյալ հիմնական պատճառները՝ համալսարանում իրենց կրթությունը չշարունակելու համար.

1. սոցիալական վարձավճարի հետ առնչվող խնդիրներ, անվճար տեղի բացակայություն – 38%,
2. կրթությունը շարունակելու հեռանկարներ չեն տեսնում – 30%,
3. Կարծում են բավարար է, աշխատելու են ու մասնագիտական փորձ հավաքեն – 15%,
4. դեռ չեն որոշել, հնարավոր է շարունակեն – 7%,
5. կարծում են մասնագիտությունը հեռանկարային չէ – 3%,
6. համալսարանի թերությունները և ոչ ադեկվատ կրթությունը, հատկապես մագիստրատուրայում – 3%,
7. մեկնելու են երկրից կամ ուսումը շարունակելու են արտերկրում – 3%,
8. մեկնելու են զինվորական ծառայության – 1%,
9. համալսարանում դիզայնի ասպիրանտուրա չկա – 0.4%:

Հարցվածների 43%-ը նշել են, որ փնտրում են նոր աշխատանք՝ 27%-ը՝ միայն իրենց մասնագիտությամբ, իսկ 16%-ը՝ նաև այլ բնագավառներում: Նոր աշխատանք փնտրողների հարաբերակցությունը անհամեմատ ավելի բարձր է Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի (100%) և Շինարարության (97%) ֆակուլտետներում, նաև Կառավարման և տեխնոլոգիաների ֆակուլտետում (45%): Նոր աշխատաք փնտրողների հարաբերակցությունը նաև բարձր է հեռակա ուսանողների մոտ (65%):

Լրացուցիչ, ստորև՝ Աղյուսակ 10-ում նշված են հարցվածների շրջանում առավել մեծ



պահանջարկ ունեցող՝ նախընտրելի առաջին 10 մասնագիտությունները/աշխատանքային ոլորտները: Նշված ցուցանիշը նշված է ինչպես ամբողջ համալսարանի, այնպես էլ յուրաքանչյուր ֆակուլտետի համար: Նախընտրած աշխատանքների ամբողջական ցանկը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 3-ում:

**Աղյուսակ 10. Նախընտրած աշխատանքներն՝ ընդհանուր և ըստ ֆակուլտետների**

| Հ. | Աշխատանքի ոլորտ                                  | Համարումհական,<br>% | ՃՖ, % | ԴՖ, % | ՇՖ, % | ՔՏԷՖ, % | ԿՏՖ, % |
|----|--|---------------------|-------|-------|-------|---------|--------|
| 1  | Միջավայրի դիզայն, ինտերիեր, էքստերիեր, գրաֆիկ.   | 15%                 | 0.0%  | 14.5% | 0.0%  | 0.0%    | 0.0%   |
| 2  | Ճարտարապետ - դիզայներ                            | 10%                 | 9.3%  | 0.2%  | 0.0%  | 0.0%    | 0.4%   |
| 3  | Ֆինանսական, բանկային, վարկային, հաշվապ., աուդիտ  | 8%                  | 0.0%  | 0.0%  | 0.0%  | 0.4%    | 7.4%   |
| 4  | Շինարարություն                                   | 7%                  | 0.4%  | 0.0%  | 4.5%  | 0.4%    | 1.5%   |
